

Նախարան

19 Սեպտեմբեր 2005
Երուսաղէմ

Սիրելի ու յարգարժան Հայք,

Շրջանիս Հ.Մ.Ը.Մ.ը իր հիմնադրութեան (1935) առաջին օրէն իսկ իր խօսքը սեփականութիւն դառնուցած է իր համակրաց թէ անդամներու շրջանակին «Հայ Արի» անուն ամսաթերթի հրատարակութեամբ, որուն մասին մինչեւ օրս կը խօսուի պատկառանքով:

Օրին պայմաններու բերումով «Հայ Արի»ն դադրած է լոյս տեսնելէ բաց եւ այնպէս, 1980 թուին, անգամ մը եւս, «Հ.Մ.Ը.Մ. Տեղեկատու» անուան տակ, Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ը յաջողեցած է հրատարակել իր խօսքը ամբողջ 10 տարի:

Այնուհետեւ դարձեալ փորձառու քատրերու չգայութեան պատճառաւ կը կայծկւտայ ջահը մինչեւ վերջերս երբ նոր երիտասարդներ կը գտնան նոր լուծում, ու վերջին 3 տարիներու ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ը իր խօսքն, աւելի գործքն, բաժին կը դարձնէ իր համակրաց թէ անդամներուն այս անգամ օգտագործելով կայքէջը (internet), օրն օրին կարճ, խօսքով, աւելին գեղեցիկ նկարներով, հեղեղելով իր ցանցը գրաւելով հետաքրքրութիւնը թէ համակրանքը բոլորին:

Մինչեւ օրս աւելի քան 30000 մուտքեր արձանագրած է Հ.Մ.Ը.Մ.ի ցանցը (website): Քաջալերուած այս իրականութենէն, միւս կողմէ զգալով հրամայականը տեղետուական ամբիոնի մը որ արձագանքը դառնայ միութեանս խօսքին թէ գործին, ինչու չէ նաեւ ընդհանրապէս գաղութի սրտի տրոփումին, վարչութիւնս որոշեց ընթացիկ կայքէջին տարբեր դասաւորում ու գունաւորում տալ ու Հայերէն լեզուի օգտագործմամբ ան դարձնել Հ.Մ.Ը.Մ.ի տեղեկատուն, դիւանն ու ամբիոնը:

Ներկայ մեր աշխատանքով «Հ.Մ.Ը.Մ. Տեղեկատու» խորագրի տակ պիտի փորձենք օրն օրին կարելի ճշտապահութեամբ եւ հետետողականութեամբ Հայ անդաստանը տեղեակ պահել մասնաճիւղիս թէ գաղութիս անհատական թէ հաւաքական վերիվայրումներուն, անցուդարձերուն, ուրախութեանց, դժուարութեանց, նուաճումներուն, նեղ պահերին եւայլն:

«Հ.Մ.Ը.Մ. Դիւան» խտագրի տակ պիտի ամփոփուին վարչութեան թէ Հ.Մ.Ը.Մ.ի անմիջականօրէն զբաղեցնող հարցերն:

Իսկ «Հ.Մ.Ը.Մ. Ամբիոն»ը պիտի դարձնենք բոլորի բեմը, որոնք յատկապէս գաղութս, Ս. Աթոռս, երիտասարդութիւնը, ազգն թէ դատն ու հայրենիքն յուզող հարցերով կը տագնապին:

Վերջապէս, որպէս տիրական առաջնահերթութիւն պիտի ծառայեցնենք մեր կայքէջը մեր հարցերուն յաղորդ պահելու մեծ ընտանիքը Հ.Մ.Ը.Մ.ի ու վերջապէս ազգն ամբողջ:

Առկայ առաջնահերթութեան իրագործման ճամբուն մի գուցէ ստիպուինք մեղմ վերաբերում ունենալ հանդէպ էջադրական-թէքնիք տողաշարական մինչեւ իսկ ուղղագրական բացթողումներուն. Առ այդ կը խնդրենք ձեր ներողամտութիւնը, քանզի որեւէ հաւակնութիւն չ'ունինք բացի այն որ կ'ուզէինք ներկայ կայքէջը դառնայ Սաղիմահայ իրականութեան թէ Հ.Մ.Ը.Մ.ի բազկերակի արձագանքը ու կանչը:

Վարչութիւն՝
Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.իութիւն